

նը այն ոսկեթէլ լարն կամ ականակուռ ճարմանդն է որ կը զոգէք ի մի՛ Մ'եծ հոգւոյ բազմազան, երբեմն նոյն իսկ իրարու ընդգմակ, կրցերն ու ձիրցերը, առանց որոյ պիտի բայցայուէին ու ցրուէին անոնց, այդու Մ'եծ միտքը բրիստոնեայ իմաստաւէր, իմաստաւէր՝ ընտիր միայնակեաց մը կը հանդիսանայ, և Մ'եծ Ազգակւէրը՝ մեծ աստուածաւէր մը: Այդ ազգու ձայնէն դիւթուած վառփուն երիտասարդը՝ արդէն աւոր Նահապետ մը եղած է, ոչ այնքան ալեօց ամաց որբան իմաստութեան, անոր սիրար գեռ կը արտիք ու կը կայստէ ի տես Այրաբատեան հողին կամ ի ձայն հայրենեաց, և միտքն ու հոգին գեռ կը սւանայ աշխարհի հրաշակերտ սրանչելեաց ու փառաց վրայ, գեռ կը թափառի նա անցելոյն աւերակներու մէջ և կը նկատէ ներկայիս հսկայակերտ բաղացները. հին նշխարներ՝ ինչպէս արդի հրաշալիք՝ չեն ծածկուիր անոր տեսնելնէն ու սրտնի... բայց Նահապետը անոնց մէջ է միայն, և ոչ անոնց ի հանապետիս ինըը լոկ նկատող մ'է անոնց և իմաստասիրող, բայց իրեն սիրոն ու հոգին զտած են արդէն երջանկութեան գրախտավայր, զիտութեան, իմաստութեան և ամէն կատարելութեան բովը... Փրկչին զեղարդնախոց միրտն է այդ. հոն Ավիշանը կ'աճի, հոն կ'ուոճանայ նման հսկայարերծ եղենոյ՝ որուն ներք կը խորհրդածէ. և հոն կը կոչէ ու կը հրաւիրէ զիտաստ իմաստաւէրը, ընդ Աստուած և ընդ մարդ միջնորդ բահանայն, ընչեղը, երիտասարդը, կուանը և ամէն հաւատացիալ՝ իրրե կենաց ու վայելիք միակ առատարուզն և մշտահամ ակը: Ուր միայն զտած անհատութեան որու և ազգերու փրկութեան հանգրուանը՝ հոն կը հրաւիրէ անմահութեան և կենացի ծարաւի իր ազգակիցը և համայն մարդկութիւնը, միատեղ ծծելու Մէր, կեանց և Անմահութիւն ճշմարտութեան ցոլըերուն տակ, ուր միայն կը ծլին ու կ'աճին անոնց: Ահա Նահապետին մեծութեան գաղտնիքը, ահա այն հնոցը ուր դարրնուեցաւ անոր. հոգին և իր ամէն ծիրցերով ու կատարելով յանկունս զարգացաւ. հոգի մը՝ որ թէ և նախինապէս հրաշակերտ մ'էր արդէն Հաստչին մատներուն, սակայն վանական ինկար բոյր որմերու հովանույն ներցէ, Մ'արմեաց ենալ Ճշմարտուրեան հողին մէջ մնանելով միայն՝ այնպէս արփիահրաշ փայլեցաւ համայն աշխարհի վրայ, իրագործելով իր անձին մէջ ներդաշնակորչն ճշմարիտ ազգասիրութիւնը ճշմարիտ աստուածսիրութեան և լայնածաւալ գիտութիւնը խոնարհ վանականութեան հետ:

Հ. Կ. Ա.

---

## ԱԼԻՇԱՆԻ ՆԱՈՐԻՆ ԱՌՋԵՒ<sup>1</sup>

Յ Յ

Իմ պաշտելի հանապետին  
Զիւնապըսակ ճակտին համբոյր,  
Աստուածաներկ ալիսներին,  
Մասեաց փոշին սպիկըրփուր:

Հոգին վառուած, աչքեր ճաճանչ  
Թուղթը խարոյկ, ինքը վըկայ,  
Զո՞ը կ'այրի լալանատաչ,  
Ճայաստանի սըրտին վրայ:

Խորհըրդաւոր երազի մէջ  
Ուր կ'արբենան բանաստեղծներ,  
Աստուածակատ լավածերն անշէջ  
Կը պըլպըլայ օր ու գիշեր:

Ժամը մեղմիկ կը չափչափէ  
Խոր հոգին զարկը փափուկ.  
«Շարժէ գըրի կեանքը կարճ է  
Կ'անցնին ժամերը խուսափուկ»:

Ու խոնարհած լուռ զննաւոր  
Խոր խաչակիր գործին մօտ,  
Հոգին խաղաղ, պատկերն աղուոր,  
Կարծես ծագող դէմքն առաօտ.

Զիւնապարփակ, Հայր, գո ճակտին  
Ես խոնարհած երկըրպագու,  
Ճաճանչներէն ցու վառ աշքին.  
Հող մը ձըգէ ինձ լուսատու:

13. Հոկ. 1926      Հ. Վ. Յովհաննէսսան

1. Կարիքէ հ. Պորտինեն - Թանգ. Միլբարեան - Վեներիկ Ս. Ղազար: